Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 սեպտեմբերի 2023թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս վերանայելով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/23» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար հանդերձանքի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/23» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 22 չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Անի տեքստիլ» ՍՊԸ-ն և 2023 թվականի մարտի 20-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Անի տեքստիլ» ՍՊԸ-ի միջև կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/23-01/103 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

«Անի տեքստիլ» ՍՊԸ կողմից էականորեն խախտվել է պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) սահմանված մատակարարման ժամկետը (պայմանագրի կնքման օրվանից 70 օրացուցային օրվա ընթացքում), որի հետ կապված «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը լուծվել է միակողմանի:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասերով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Անի տեքստիլ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակվելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «Անի տեքստիլ» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրենի
պարտականությունները կատարող **Մ. Վարդանյան**